

# **««Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում փոփոխությունն կատարելու մասին» օրենքի նախագիծ**

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

### **Օ Ր Ե Ն Զ Ը**

#### **«ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» 2017 թվականի նոյեմբերի 15-ի թիվ ՀՕ-195-Ն օրենքի 65-րդ հոդվածի 1-ին մասում «30» թիվը փոխարինել «60» թվով:

#### **Հոդված 2. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

2. Կառավարության 2023 թվականի հուլիսի 20-ի N 1219-Ն որոշման մեջ սույն օրենքից բխող փոփոխությունները և լրացումները կատարվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում:
3. Մինչ սույն օրենքն ուժի մեջ մտնելը պայմանագրային զինծառայողի համար ծագած՝ ծառայության վայրում ծառայողական բնակարանով չապահովվելու դեպքում ամսական դրամական հատուցում ստանալու իրավունքը այդ զինծառայողի՝ սույն օրենքի 1-ին հոդվածով սահմանված պայմանին չբավարարելու դեպքում սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից դադարում է: